ՌՀՕ-ի Վարքականոնը Թիմերի Համար

«Կարևոր է ոչ թե հաղթելը կամ պարտվելը, այլ թե որքա՛ն կսովորես»

Որպես թիմ՝ մենք հետևում ենք հետևյալ սկզբունքներին:

Մենք մասնակցում ենք մրցույթի:
Մենք սիրում ենք հաղթել և ցանկանում սովորել:
Մենք նաև խաղային հաճելի ժամանակ ենք ուզում անցկացնել:

Մենք ցանկանում ենք արդար խաղալ:
Մենք ստեղծում ենք մեր սեփական ռոբոտը և գրում մեր սեփական ծրագիրը:
Արդար չի լինի, եթե մի ուրիշն անի դրանք մեզ համար:

Մենք կարող ենք սովորել ինչ-որ բան, միայն երբ դա փորձում ենք ինքներս:
Մեր մարզիչը կարող է մեզ սովորեցնել և ուղղորդել:
Մեզ կարող են ոգեշնչել նաև այլ անձինք:

Բայց մեր մարզիչը չպետք է կատարի աշխատանքը մեր փոխարեն:
Եվ մենք պարզապես չենք պատճենում ուրիշի ռոբոտը կամ ծրագրային ապահովումը:
Մեր գտած օրինակները մենք օգտագործում ենք մեր սեփական ռոբոտն ու ծրագիրը ստեղծելու համար:

Երբեմն մենք ձախողում ենք, և դա բնական է:
Ինքնատիպ գաղափարները ծնվում են ձախողումներից:
Հաղթանակը հաճելի է, բայց ձախողումը մեր ճանապարհի մի մասն է:

Թիմի անուն_____

Մարզիչի անուն և ստորագրություն_____

Թիմի անդամների անուններ և ստորագրություններ_____

_____

_____

© ՌՀՕ լոգոտիպը հանդիսանում է «ՌՀՕ» Ասոցիացիայի ապրանքանիշը 2026

Ինչ է կարելի և ինչ չի կարելի ՌՀՕ-ում

Թույլատրելի է	Թույլատրելի չէ
Բոլոր մրցույթներ	Բոլոր մրցույթներ
Մենք համացանցում որոնում ենք տեղեկույթ և գաղափարներին հաղորդակից դարձնում նաև այլ անձանց: Մենք օրինակներից սովորում ենք և մեր սովորածն օգտագործում մեր սեփական ռոբոտի սարքակազմը և/կամ ծրագրակազմը ստեղծելու համար:	Մենք լուծումը գնում ենք համացանցից կամ ուղղակի պատճենում մի ուրիշի ստեղծածը: Մենք այդ լուծումը (սարքակազմ և/կամ ծրագրակազմ) օգտագործում ենք մրցույթի ժամանակ:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ ծրագրավորման տարբեր խորհուրդներ է տալիս:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ ծրագրավորման տարբեր խորհուրդներ է տալիս:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է տարբեր ձևերով կառուցել այս կամ այն մասը:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ համար կառուցում է ռոբոտը (կամ դրա որոշ մասեր):
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը թույլ է տալիս, որ մե՛նք որոշենք մեր անելիքը, երբ ինչ-որ բան չի աշխատում:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ համար շտկում է չաշխատող մասերը:
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը թույլ է տալիս, որ մրցույթի օրը մե՛նք լուծենք ծագող խնդիրները:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մրցույթի օրը մրցավարների հետ քննարկում է կանոնները կամ որոշումները:
Մենք ցանկանում ենք հաղթել մրցույթում, բայց ո՛չ խաբեությամբ կամ մեր փոխարեն ուրիշի կատարած աշխատանքի հաշվին:	Մենք ցանկանում ենք հաղթել մրցույթում, և կարևոր չէ, թե ինչպես:
Մենք ինքներս ենք հարմարեցնում մեր ռազմավարությունը և ինքներս ենք նորոգում կամ ձևափոխում մեր ռոբոտները:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը առաջարկում է կամ ասում է, թե ինչպես փոփոխել մեր ռազմավարությունը և ինքն է նորոգում կամ ձևափոխում մեր ռոբոտները մեզ համար:
Ռոբո-առաքելություն	Ռոբո-առաքելություն
Մենք փորձում ենք անակնկալ առաջադրանքն ինքներս կատարել, որովհետև յուրացրել ենք հիմնական նյութը և կարող ենք որպես թիմ լուծում գտնել:	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը փորձում է մեզ ուղղություն տալ, թե ինչպես կատարենք անակնկալ առաջադրանքը վերջինիս հայտնի դառնալուց հետո:
Ապագա նորարարներ	Ապագա նորարարներ
Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը մեզ օգնում է ռոբոտի մոդելը կամ «Ապագա նորարարներ»-ի տաղավարը պատրաստելու ժամանակ, միայն եթե դրա կարիքը կա (օրինակ՝ եթե առարկաները շատ ծանր են, եթե կարիք ունենք նոր հմտություններ սովորելու կամ եթե ինչ-որ բան ինքնուրույն պատրաստելը խիստ վտանգավոր է մեզ համար):	Մեր մարզիչը/խորհրդատուն/ծնողը որոշում է մեր ռոբոտի մոդելը և/կամ թե ինչ տեսք պիտի ունենա մեր տաղավարը, պատրաստում այս կամ այն բանը մեզ համար, նույնիսկ եթե մենք դրանք կարող ենք ինքներս անել:

© ՌՀՕ լոգոտիպը հանդիսանում է «ՌՀՕ» Ասոցիացիայի ապրանքանիշը 2026